ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
դրամաշնորհի տրամադրման

Քաղ. Երևան 16 02 2016թ.

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Աշոտ Արզումանյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Վահե Ճուղուրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N1937-Ն որոշումը, ՀՀ կառավարության 24.12.2015 թվականի «ՀՀ կառավարության որոշումը 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1555-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «Կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայություններ» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել նախատեսված՝ 80315.3 (ութսուն միլիոն երեք հարյուր տասնհինգ հազար երեք հարյուր) հազար ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման

N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված գումարների սահմաններում, եռամսյակային համամասնություններին համապատասխան, ամսական կտրվածքով:

Դրամական միջոցները կազմակերպությանը տրամադրվում են մինչև տվյալ ամսվա հաջորդող ամսվա 20-րդ աշխատանքային օրը: 2016 թվականի դեկտեմբեր ամսվա համար հատկացվելիք գումարը տրամադրվում է մինչև 2016 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է

պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Հայաստանի Հանրապետություն Ֆինանսների նախարարություն Հասցե՝ ք.Երևան,Մելիք-Ադամյան 1 Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն հ/հ 900011017432 ՀՎՀՀ 02528265	«Գնագոյացման Վերլուծական Ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ 375088,ք.Երևան, Մազմանյան 5 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Շահումյան մ/ճ հ/հ 163028033054 ՀՎՀՀ 02702254
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Ա. Արզումանյան	Վ. Ճուղուրյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 2016 թ. դեկտեմբեր 16 -ին
կնքված N _____ պայմանագրի

«ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԳՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ և ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

հ/հ	Իրականացվող միջոցառման									
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)	Այդ թվում ըստ եռամսյակների աճողական			
							I	II	III	IV
1	Կողմնորոշիչ գների մեթոդաբանական վերլուծական և տեղեկատվական ծառայություններ	Պետական կարիքների համար ապրանքների շուկայական գների օրական, ամսական, եռամսյակային տեղեկատվության հավաքագրում, մշակում և ուսումնասիրություն, ամենամսյա տեղեկագրերի հրապարակում, մասնակցություն ՀՀ տարածքում տնտեսության ոլորտների կարիքների համար ապրանքների գների գնագոյացման և հեռանկարային զարգացման ծրագրերի պետական քաղաքականության մշակման աշխատանքներին, պետական պատվերի շրջանակներում տնտեսության ոլորտների ծրագրերի իրականացում, գործող գներով տնտեսության ոլորտներում ապրանքների և աշխատանքների արժեքների հաշվարկման կարգի կատարելագործում	Պետական պատվերի շրջանակներում գործող գներով տնտեսության ոլորտների կարիքների համար շինարարական ապրանքների գների և աշխատանքների արժեքների մասին ամսական տեղեկագրերի մշակում և հրապարակում (հատ)	780-960	2016	80 315 300	13413700	33492500	53571300	80315300
			Պետական պատվերի շրջանակներում գործող գներով շինարարության բնագավառի նյութերի, ռեսուրսների արժեքի փոփոխման, աշխատավարձի մոտավոր միջինացված, շինմոնտաժային աշխատանքների արժեքի փոփոխման միջինացված, կապիտալ ներդրումների արժեքի փոփոխման միջինացված ինդեքսների և մեքենաների ու մեխանիզմների շահագործման ծախսերի գործակցի ամսական ցուցանիշների հաշվարկում և սահմանված կարգով ներկայացում ՀՀ ֆինանսների նախարարությանը և շահառուներին (հատ)	60	2016					
			Հայաստանի Հանրապետությունում ծառայողական ավտոմեքենաների առավելագույն գների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, մշակում և սահմանված կարգով ներկայացում ՀՀ ֆինանսների նախարարությանը (ավտոմեքենաների նվազագույն քանակ՝ հատ)	30	2016					

Պետական մարմին

ՀՀ ֆինանսների նախարարություն

Աշխատակազմի ղեկավար

Ա. Արզումանյան

Կ.Տ.

Կազմակերպություն

«Կանգնեցման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն»
ՊՈԱԿ-ի

Տնօրեն

Վ.Ճուղուրյան

Կ.Տ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԳՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ և ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱԱՆ ԾԱԽՍԵՐԻ

N	Անվանումները	Սույն նախա-հաշվով հաստատվող ցուցանիշներ (հազ. դրամ)	Այդ թվում ըստ եռամսյակների (եռամսյակի ամիսների) աճողական			
			I	II	III	IV
1	**Բ.Պետ բյուջեից ֆինանսավորում Ընդամենը Այդ թվում**	80 315,3	13 413,7	33 492,5	53 571,3	80 315,3
2	Աշխատանքի վարձատրություն	71 031,6	11 873,0	29 802,2	47 417,8	71 031,6
3	Տեղեկատվական ծառայություններ	1 400,0	233,8	560,0	933,8	1 400,0
4	Գրասենյակային սարքավորումներ	200,0	33,4	80,0	133,4	200,0
5	Կապի ծառայություններ	685,3	114,4	274,1	457,1	685,3
6	Էներգետիկ ծառայություններ	1 515,3	253,1	606,2	1 010,6	1 515,3
7	Կոմունալ ծառայություններ	120,0	20,0	48,0	80,0	120,0
8	Գրասենյակային նյութեր	500,0	83,5	200,0	333,5	500,0
9	Գործուղման ծախսեր	910,0	152,0	364,0	607,0	910,0
10	Համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակում և սպասարկում	400,0	66,8	160,0	266,8	400,0
11	Տրանսպորտային նյութեր	2 645,1	441,7	1 058,0	1 764,3	2 645,1
12	Մեքենայի և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	850,0	142,0	340,0	567,0	850,0
13	Ապահովագրական ծառայություններ	58,0	-	-	-	58,0

Պատասխանատու մարմին

ՀՀ ֆինանսների նախարարություն

Աշխատակազմի ղեկավար՝

Ա. Արզումանյան

Կ.Տ.

Կազմակերպություն

«Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի

Տնօրեն՝

Վ.Ճուղուրյան

Կ.Տ.